9. — Խորհրդաւոր խոյ մը Ս. Գերեզմանին մէջ. (550). — *Քրիստոսի Ս. Գերեզմանին մօտենալ կ'ուզէր Յուստինիանոսի (527–565) սիրելի, Պաղեստինի կառավարիչ և դուքս Կէվէմիր որ Բիւզանդիոնի ամենէն պատուական զօրապետն էր և յաղթող հանդիսացած էր արաբական և պարսկական բանակներուն։*

Բայց ինչո՞ւ համար այս յաղթականը կը խռովի և կը գունատի՝ երբ մօտենալ կ'ուզէ Փրկչին Ս. Գերեզմանին, և ինչո՞ւ կ'ուզէր ետ դառնալ, վասնզի ուրուական մը կ'երևնար իրեն, ուրուատեսիլ խոյ մը(*), գլխահակ և սպառնալից եղջիւրներով դուրս կ'ելլէր Ս. Գերեզմանէն և կարծես իր վրայ պիտի յարձակէր և ետ կը մղէր զայն անընկճելի խոյանքով մը։

«Քաջ զօրապետ»ը ի զուր խռոված, օգնութեան կը կոչէ Խաչին պահապանը և իր սակրաւորները։ Ի զուր կը հարցափորձէ զանոնք և կը պաղատի, խորհրդաւոր խոյը կատաղութեամբ կը յարձակի եւ ետ կը մղէ զանիկա... «Մեծ մեղաւոր մըն եմ, կը գոչէ խռովեալ պատրիկը, և Աստուծմէ ներում կը խնդրեմ...։» Բայց աս հրապարակային խոստովանութիւնը և ապաշխարութիւնը անբաւական են, վասն զի զօրապետը և իր կինը հերետիկոս են և ընդունած Սեւե-

---

(*) Թէփէցիք, ինչպէս նաեւ միւս Եգիպտացիք՝ որ Թէփէի Ամոն աստուածին պաշտամունքը ունէին, խոյը կ'ընդունէին իբր նուիրական անասուն մը, եւ չէին զոհեր զայն։ Բայց տարին անգամ մը Ամոնի տօնին խոյ մը կը սպաննէին, կը թերթէին զայն եւ անոր մորթին մէջ կը նագցնէին աստուծոյ պատկեր։ Երբ կը մեռցնէին խոյը կը թաղէին զերեզմանի մը մէջ։ Թէփէցիներուն աստուածն էր խոյը. ուրիշ բառով Ամոնն էր ան։ Ամոնի պատկերը կը շինէին անոնք կէս մարդու մարմնոյ ձեւով եւ խոյի գլուխով մը. (G. B. F. էջ 500)։